

Էջմիածին (պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան),
No. 5 (մայիս 2006) , էջ 60-72:

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր

1720-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՅՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղափանի հայոց անկախ իշխանապետության (1722-1730) պատմության ուսումնասիրման գործում վերջերս պատշաճ ուշադրության է արժանացել «Ղափանցվոց պատմության» վեցետիկյան հրատարակությունը¹, որն ընդգրկում է Ս. Շահումյանի և Տեր Ավետիքի նախնական պատումների գրառումները և դրանց հիման վրա Ղուկաս վրդ. Սեբաստացու կազմած Համապատում բնագիրը²:

Այս հոդվածում ևս, պատմական լրացուցիչ աղբյուրների հետ մեկտեղ, օգտագործված է «Պատմության» վեցետիկյան հրատարակության ընձեռած նոր նյութը, ինչպես նաև Ղուկաս Սեբաստացու ցայսօր գիտական շրջանառությունից դուրս մնացած՝ աշխարհագրագիտական մի անտիպ աշխատության Սյունիքին վերաբերող գլուխը³:

Որո՞նք էին Դավիթ բեկի իշխանապետության սահմաններն ու ընդգրկած տարածքը:

¹ Տե՛ս **Հ. Դ. Փափազյան**. «Դավիթ-բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ».- Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1987, № 1, էջ 89-102: **Ա. Մ. Այվազյան**, «1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից (սկզբնաղբյուրների համադրման փորձ)».- ՊԲՀ, 1990, No. 2 (129), էջ 119-134: **Նույնի**՝ «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները».- ՊԲՀ, 1990, No. 3 (130), էջ 76-85: **Նույնի**՝ «Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք».- ՊԲՀ, 1990, հմր. 4 (131), էջ 63-80: **Նույնի**՝ «Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ.».- ՊԲՀ, 1991, հմր. 2 (133), էջ 102-114: **Նույնի**՝ «Ղափանցվոց պատմության» հավաստիությունն ու կառուցվածքը».- ՊԲՀ, 1992, No. 1 (134), էջ 85-100 (այս հոդվածաշարն ամփոփված է 1992 թ. պաշտպանված թեկնածուական դիսերտացիայում՝ «Ղափանցվոց պատմությունը» և 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման ուսումնասիրությունը):

² Դավիթ Բեկ կան «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Սամուել վրդ. Արամյան, Վեցետիկ-Ս. Ղազար, 1978 (այսուհետև՝ Պատմութիւն Ղափանցւոց), էջ 62-92: Այս հրատարակության բնագրային մասը հոդվածիս շարադրանքի մեջ համառոտագրություններով հղելու ենք ըստ հետևյալ հատվածների. ՊՍԸ՝ Պատումն Ստեփան Շահումյանի, էջ 119-130. ՊՏԱ՝ Պատումն Տեր Աւետիք քահանայի, էջ 131-143. Համապատումն Համապատումն բնագիր, խմբագրեց Ղուկաս վրդ. Սեբաստացի, էջ 147-181. Ջորացուցակ՝ Դավիթ-բեկի զորավարների ցանկը և Տեր-Ավետիքին նվիրված ներբողը, էջ 143-145:

³ **Ղուկաս Սեբաստացի**, Համառոտ պատմութիւն թագաւորացն Հայոց եւ աշխարհագրութիւն Հայաստանի եւ աշխարհագրական բառարան, Վեցետիկ, Ս. Ղազարի մատենադարան, 480 էջ: Մատյանի բովանդակությունը նկարագրել է Ս. Արամյանը (տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց, էջ 190-193): Հոդվածին կից հրապարակվող հատվածն ընդգրկում է գրքի երկրորդ մասի էջ 63-70-ը, որոնց ձեռագիր բնօրինակի պատճենը մեր խնդրանքով սիրահոժար տրամադրել էր երջանկահիշատակ արքայազն, բազմավաստակ հայազետ Ս. Շենճեմյանը տակավին 1992 թ., որի համար մեծապես շնորհակալ ենք:

Ղափանի իշխանապետության հյուսիսային սահմանը

«Պատմության» տվյալներից դատելով՝ Դավիթ բեկի իշխանության տակ գտնվող ամենահյուսիսային գավառը Սիսիանն էր (տե՛ս ՊՍՇ, էջ 121. ՊՏԱ, էջ 133, 134. Ձորացուցակ, էջ 144. Համապատում, էջ 149, 152-153): Այս իրողությունն է հուշում նաև Մխիթար սպարապետի ստորագրությամբ ռուսաց կայսրին հղած հայտնի ուղերձում (1726 թ. մարտի 24) առկա հետևյալ հաղորդումը.

«...օսմանցիքն բազմահոյլք հողովագործք եկին Ջարմակայ գլուխքն բազումք քաղաք, վանք, անապատք, գեղորանք առան տիրեցան... յետ սոցա դիմեցան առ մեզ»⁴ (այս և հետագա բոլոր ընդգծումներն իմն են՝ Ա. Ա.):

Օսմանցիները կարող էին գրոհել Ջերմուկի վրա ամբողջ Վայոց ձորը գրավելուց հետո միայն՝ հարավարևելյան ուղղությունից (Ջերմուկի արևմտյան կողմում ձգվում են Ղարաբաղի բարձրավանդակի դժվարանցանելի լեռները, որոնցից այն կողմ Ղարաբաղի Հայոց Սղնախների զինված ուժերն էին): Հետևաբար, Ղափանի հայկական իշխանապետության սահմանները (համեմայն դեպս, 1725-1726 թթ.) սկսվում էին Վայքից հարավ:

Արևելյան սահմանները

«Պատմության» մեջ հիշատակված Դավիթ բեկի իշխանության ներքո գտնվող ամենաարևելյան գյուղերն ու վայրերն էին. Ծավ, Շիշկերտ (Շիշկետ, Իշկերտ, Իշկետ), Գեմանցու (Կեմանցու, Կումանու) դաշտ, Շնհեր (Շինուհայր), Շիվանաձոր (Շվանիձոր), Ղարաչիմեն, Խոտանան, Եղահորդ (Եղայ հորթ, Եղավարդ, Եղեվարդ, Եղվարդ): Սրանցից բուն սահմանային բնակավայրերը հետևյալներն էին.

ա) Ս. Շահումյանը մի առիթով հստակ նշում է, որ Թորոս բեկն իր զորքով «գնաց մինչև Եղայ հորթ, որ է ի սահմանս Պարկուշատայ» (ՊՍՇ, էջ 125. հմմտ. Համապատում, էջ 158): Բնական էր, ուրեմն, որ Եղահորդին մոտակա Երիցվանեկ (Եռցիվանակ, Իրիցվանիկ, Կարմիր վանք, այժմ՝ Արծվանիկ) և Խոտանան գյուղերը նույնպես սահմանային կռիվների վայր էին հանդիսանում (տե՛ս Համապատում, էջ 164-165)⁵:

բ) «Ղափանցվոց պատմության» Համապատում բնագրից դուրս է ընկել Տեր Ավե-

⁴ Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. Том II, часть II. Под редакцией Ашота Иоаннисяна. Ереван: изд. АН АССР, 1967 (այսուհետև՝ АПО, II), док. 335, с. 273-274.

⁵ Այս առումով հետաքրքրական է, որ մեկից Ֆռանգյուլի դավաճանությունից (1724 թ. մարտի վերջ-ապրիլի սկիզբ) որոշ ժամանակ անց Դավիթ-բեկն իր իշխանության սահմաններում էր համարում առաջինիս սեփական գյուղը՝ Երիցվանեկը կամ Կարմիր վանքը («...Երցվանեկ աւանին, որ եւ ասի Կարմիր վանք...» – Համապատում, էջ 157), ինչը պարզ երևում է հետևյալ հաղորդումից. «...ցեղ ինչ Թուրքացն Պարկուշատայ գային ի լեռնակողմանս Ղափանու, վրանօք բնակէին վասն խստութեան տօթոյ երկրի իւրեանց, որպէս եւ յայլ ամենայն ժամանակս ամարայնոյ առնէին: Արդ՝ իբրեւ զայն լսէր Դավիթ Պէկն, վաղվաղակի զՄխիթար սպարապետն իւր հազար ութ հարիւր վառելովք ի վերայ նոցա առաքէր. եւ նա երթայր յուզէր եւ յետամուտ լեալ գտանէր զնոսա ի վերին կողմանս Կարմիր վանք կոչեցեալ աւանին, եւ ի վերայ հասանէր նոցա...» (Համապատում, էջ 164): Սա նշանակում է, որ հայոց զորքերն անպատիժ չէին թողել մեկից Ֆռանգյուլի ուխտադրությունը և գրավել էին Երիցվանեկը:

տիքի կարևոր տեղեկությունն այն մասին, թե ինչ է արել Դավիթ բեկը Պապ գորավարին Շիշկերտում գլխատելուց հետո: Տեր Ավետիքը, որն այդ ժամանակ, ըստ երևույթին, Դավիթ բեկի բանակում էր, ծանուցում է.

«[Դավիթ-բեկը] անտի (Շիշկերտից՝ Ա. Ա.) գնաց ի Չաւնդուր⁶, անդ եւս զորածողով լեալ, եւ առեալ ընդ իւր զգօրսն՝ գնաց ի վերայ Թուրքին, եւ հարին կոտորեցին Շահայակլու գիւղորէսն, եւ զինչս նոցա առեալ՝ եկին ի դաշտն Կումանու» (ՊՏԱ, էջ 134. հմմտ. Համապատում, էջ 159-160):

Նույն ժամանակահատվածի անցքերը նկարագրելիս Ս. Շահումյանը հայտնում է, որ այդ պահին Դավիթ բեկը հաջորդականորեն բնակվում էր Շիշկերտում, Գեմանցի դաշտում և Ծավում (ՊՍՇ, էջ 126): Ակնհայտ է, որ վերջին երեք վայրերը նույնպես գտնվել են սահմանամերձ գոտում, քանի որ այդտեղից է Դավիթ բեկն արշավել Շահայակլու գյուղերի վրա: Մահմեդականաբնակ այդ գյուղերը կարելի է որոշակիորեն տեղադրել նախկին Ադրբեջանական ԽՍՀ Ջանգելանի շրջանի Շայիֆլի (Շայիպյու, Շայուպյու)⁷ ավանի շրջակայքում՝ Շիկահողից մոտ 6 կիլոմետր հյուսիս-արևելք, Ողջի գետի աջ ափին, այժմ ազատագրված տարածքում: Շահայակլուն կամ Շահապակլուն վարչականորեն պատկանել է Չավնդուր գավառին⁸, բայց ակներև է, որ սահմանային գոտում գտնվելով՝ Շահայակլուի բնակիչները հարելու էին Բարգուշատի մահմեդական իշխանությանը՝ ի դեմս Ֆաթի-Ալի սուլթանի:

զ) 1724 թ. ապրիլին Իվան Կարապետը Ղարաբաղից անցնում է Ղափան ու որոշ ժամանակ անց իրեն ուղեկցող 200 հոգիանոց ջոկատով⁹ փորձում ետ վերադառնալ, սակայն, ինչպես ինքն է պատմում՝

«Քերդն եւ Բարգուշատայ սուլթանըն մեր ճանապարհըն կտրեցին, ոնչ գիդել ինք (կարողանում էինք-Ա.Ա.) յառէջ գնալ, ոնչ գիտել ինք յեղ դառնալ: Եկինք Խնծորիս անվանիս Ա (1) գեղ կէր, մեք եկինք տեղն ԲԾ (200) մարդօվ, թէ յեղ գանք. Քուրդն արէկ մեր վերէն:...մեր փոքր դօշունը (զորքը-Ա.Ա.) դուս գնաց Քերդերին գլխավորէրն ջարթեցինք, բարի յեղ եկինք էլ Ղարաբաղ»¹⁰:

1720-ականներին Խնծորեսկի սահմանային ավան լինելու փաստը կողմնակի կերպով հավաստում է նաև Աբրահամ Կրետացին.

⁶ Շիշկերտը ևս Չավնդուր գավառի մեջ էր:

⁷ 1886 թ. մարդահամարի ժամանակ այս բնակավայրն ուներ ընդամենը 88 բնակիչ (տե՛ս Դ. Ալիշան. Սիսական, Վենետիկ, 1893, էջ 101):

⁸ «Եւ ունի Չավնդուր այժմ զայսոսիկ փոքր աւանս, այսինքն՝ զԿապազլուիս, գետջան, զՊուրջովան, զՊարտախ, զՇիւանածորն, որ ունի զբերդ, զԹուփ, զԿումարայց, զՇահապակլու, զՓքնի, զԻշկետ, զԿեմանցու, զՇխեր, որ է իշխանանիստն Չավնդուր, եւ զբազում գիւղորայս» - տե՛ս կից հրապարակվող «Ինքնորոգ աշխարհն Մեծին Հայոց, որ Սիւնիք ասի» հավելվածը:

⁹ Ա. Մ. Այվազյան, «1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից», էջ 132, ծնթ. 55:

¹⁰ АРО, II, док. 277, с. 185.

«Նախ կային ԵՃ (500) տուն ի խնժորեկ գեղն, բայց այժմ (1736 թ.-Ա.Ա.) սակաւացեալք էին: Զի բազումք սպանեալք էին ի թուրքաց, քանզի փաշայք զօրօք իւրեանց քանիցս անգամ եկեալ էին ի վերայ նոցա եւ ոչ կարացին մուտ առնել, այլ պատերազմեալ ընդ միմեանս յետ դառնային ամօթով»¹¹:

Երկու այլ վավերագրերում Իվան Կարապետը խոսում է Ղարաբաղի և Ղափանի միջև թշնամական մահմեդական իշխանության գոյության մասին.

«[Ղարաբաղի և Ղափանի («Մեծ Խայերի»)] միջումն Բ (2) մեծ ալ կայ, Քուրդ ան եւ հավատով տոնի ան»¹².

«Եւ էս Խայերին մէտեղն Քուրդ կայ: Էս Խայերն ասում ան, թէ... կուզանք Քուրտին վերէն. քուրտն փչացնենք, որ տեղէս մինչի Երեւան ողջ Խայեր ան Ա (1) կուտառնան»¹³:

Հատուկ «Ղափանցվոց պատմության» համար պատրաստած իր քարտեզում Ղուկաս Սեբաստացին Ղափանի հյուսիսարևելյան սահմանային վերջին գծի վրա կանգնած ավանների թվում խնժորեսկի կողքին նշել է «Կորին», «Կորէսը», «Խնածախը» և «Տեղը»¹⁴: Այս գծից այն կողմ էլ, անշուշտ, սկսվել է Ղափանի և Ղարաբաղի միջև ընկած մահմեդական իշխանության զբաղեցրած ոչ մեծ տարածքը: Ղափանի իշխանապետության թերևս ամենաարևելյան ամրացված կետը եղել է Ջորացուցակում հիշվող Կուլաբերդը, որտեղ կար 110 զինվոր՝ Ղազար զորավարի հրամանատարու-

¹¹ Աբրահամ Կրետացի. Պատմութիւն: Քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 151:

¹² АРО, II, док. 277, 211, с. 71: Աշ. Հովհաննիսյանն իրավամբ զգուշացնում էր, որ «քուրդ» անունով Իվան Կարապետը նշել է ոչ թե քուրդ ազգի ներկայացուցիչներին, այլ առհասարակ բոլոր մահմեդականներին (տե՛ս *Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. Том II, часть I. Под редакцией Ашота Иоаннисяна. Ереван: изд. АН АССР, 1964* (այսուհետև՝ АРО, I), с. LVI: Վերը բերված դեպքում, սակայն, «քուրդ» ցեղանունը (էթնոնիմ) գործածված է ուղղակի իմաստով: Դեռևս XVII դ. վերջին Ջաքարիա Քանաքեռցին, որն իր «Պատմագրության» մեջ հստակորեն տարբերակում է մահմեդական տարբեր ցեղախմբերը և նրանց դավանական ուղղությունները, հիշատակում է Քաշաթաղի Հոջես ավանում (նախկին Ադրբեջանական ԽՍՀ Լաչինի շրջանում), այսինքն՝ հենց Ղարաբաղի և Ղափանի միջև, հայերի կողքին բնակվող տուննի քրդերին (տե՛ս **Ջաքարիա սարկաւազ**. Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, հ. II, գլուխ Ե, էջ 9-10. հմմտ. **Ղ. Ալիշան**. Սիսական, էջ 269): Իր դիրքի բերումով ցեղադավանական հարցերին քաջատեղյակ մի ուրիշ հեղինակ՝ Էջմիածնի կաթողիկոս Աբրահամ Կրետացին, իր երկի մույն էջերում իրարից զատելով «օսմանցի-թուրք» ու «քուրդ» ցեղանունները, գրում էր, որ խնժորեսկի վրա, բացի օսմանցիներից, բազմիցս հարձակումներ են գործել նաև Ղարաչոռլու ցեղի քրդերը (տե՛ս **Աբրահամ Կրետացի**. Պատմութիւն, էջ 150-151): Ղարաչոռլուների քուրդ լինելու փաստը հաստատում են նաև թուրքական աղբյուրները, – տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 159:

¹³ АРО, II, док. 239, с. 99.

¹⁴ Քարտեզը տե՛ս «Պատմութիւն Ղափանցուց», Առաջաբան, 49-րդ էջից առաջ՝ ներդիրում:

թյամբ (էջ 144): Դատելով Սեբաստացու կազմած քարտեզից՝ կարելի է անվարան ասել, որ Կուլաբերդը այսօրվա Լաչինի շրջանի Գյուլեբիրդ ավանն է, Հագարու գետի աջ ափին:

Ղափանի իշխանապետության արևելյան ամենահարավային վայրերից «Պատմության» մեջ հիշվում է Շիվանաձորը, որտեղ տեղակայված էր Սարգիս զորավարի 250-հոգանոց ջոկատը (Ձորացուցակ, էջ 144):

Արևմտյան սահմանը, եթե չհաշվենք Ագուլիսի (գուցե և Երնջակի) կարճատև գրավումը, ձգվում էր Ձանգեզուրի լեռնաշղթայի (Սյունյաց լեռների) երկայնքով. «Պատմության» մեջ նշվում է հայկական զորքերի հարձակումը Ղազանկուլու (Կապուտջուղ) լեռան շրջակայքում քոչող թուրքմեն ցեղերի վրա (ՊՏԱ, էջ 135. հմմտ. Համապատում, էջ 164):

Ղափանի հարավային սահմանը հատում էր Արաքսը: Հայոց պատմության վերջին հարյուրամյակների ընթացքը երևակող խիստ ուշագրավ պատմական փաստ է այն, որ 1720-ականների Ղափանի հայոց իշխանապետության սահմանները գրեթե համընկնում են արդի Հայաստանի Հանրապետության հարավային շրջանների սահմաններին. մյուս կողմից՝ Բարգուշատի մի քանի տասնյակ հայկական գյուղերն ու ավանները, ինչպես նաև Գողթնի, Երնջակի և Ճահուկի հայկական բավական մարդաշատ բնակավայրերը¹⁵, որոնք դուրս մնացին Ղափի բեկի գլխավորած ազատագրական շարժման ոլորտից, հետագայում իսպառ հայաթափ եղան: Բարգուշատն ազատագրվեց միայն 1992-1994 թթ. արցախյան ազատամարտի ընթացքում:

Գուրիամ-Կաքավաբերդ: Կենսավուզ: Մեղրի:

Ըստ Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցանկի (XVII դար)¹⁶, Մեղրի գետի հովտի գյուղերը (Կալեր, Եկդաստանց, Վանք և այլն) մտնում էին Կաքավաբերդ գավառի մեջ¹⁷: 1720-ականների համար, սակայն, «Ղափանցվոց պատմության» տվյալները վեր են հանում մի նոր իրողություն. Կաքավաբերդն առհասարակ չի հիշվում, փոխարենը՝ Կալերը հիշատակված է Գուրիամ գավառում. «...հրեշտակս արծակեցին Մեղրացիքն ի գաւառն Գուրիամ՝ ի Կալեր»¹⁸ (Համապատում, էջ 160-161): Ղուկաս Սեբաստացու վերը նշված քարտեզում այսօրվա Մեղրու շրջանը բաժանված է երկու գավառի՝ Գուրիամի և Կենսավուզի միջև, ընդ որում, Գուրիամն ակներևաբար ընդգրկում է Կաքավաբերդը կամ առնչվազն նրա մի մասը. Գուրիամում են նշված Կալերը, «Դաշտունը», «Ձուարը», «Եկդաստայը», «Քարը», ինչպես հետագայում Ղուկաս Սեբաստացին ճշտել է՝ «Իսկ Գուրիամ ունի զաւանն Կալեր, ուր բնակէր Պապ զօրա-

¹⁵ Տե՛ս «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի», հրատարակության պատրաստեց Աշ. Աբրահամյանը, Երևան, 1942, էջ 42. հմմտ. **Մաշտոցի անվ. Մատենադարան**, ձեռ. № 6271, էջ 339ա: **Аргам Айвазян, Памятники армянской архитектуры Нахичеванской АССР**, Ереван, 1981, с. 64-102:

¹⁶ Տե՛ս **Ղ. Ալիշան**. Սիսական, էջ 242:

¹⁷ Տե՛ս «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի», էջ 41:

¹⁸ Նույն նախադասության հիման վրա էլ Թ. Խ. Հակոբյանը ժամանակին մակաբերել էր, որ «Կալեր և Մանլի գյուղերի շրջակայքը այդ ժամանակներում (XVIII դ.-Ա. Ա.) մտնում էր Գրիամ գավառի մեջ», տես **Թ. Խ. Հակոբյան**. Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Երևան, 1966, էջ 106-107:

գլուխն Դաւթի 700 զօրօք ի մերում ժամանակի, եւ զայլ ականս, որք կոչին Մազրան, Քար, Դաշտուն, Ջուար, Թաղամեր եւ այլն»¹⁹: Գուրիհան գավառի այս տեղադրությունը լավագույնս հաստատում է Ս. Շահումյանի հաղորդումը թշնամական մի հարձակման մասին, ուր ասված է, որ «այլազգիները» Տաշտունի լեռնանցքի մոտից «անցին ի Գուրան, եւ եկին աւար հարկանելով զկողմանս Գուրանու՝ մինչեւ ի Մեղրայ» (ՊՄՇ, էջ 127): Պարզ է, որ «այլազգիները» Տաշտունից Մեղրի պիտի շարժվեին Մեղրի գետի հովտով, այսինքն՝ Կաքավաբերդի (=Գուր/հ/ամի) միջով:

Կենավուզ տեղանունը երբեմն գործածվում էր ավելի լայն իմաստով՝ իր մեջ ներառելով նաև Գուրիհան գավառը (տե՛ս ՊՄՇ, էջ 123, 126): Այդ պատճառով է, թերևս, Ղուկաս Սեբաստացին Կենավուզի մեջ ընդգրկում Կարճևանը, Լճկինը (Լիճք) և Մեղրին, որոնք նախկինում Կաքավաբերդ գավառի կազմում էին: Նա նաև նշում է, որ «ունի եւ Կենաուզն զհամանուն իւր ական»²⁰: Հետաքրքիր է, որ Տեր Ավետիքը, բոլորովին չհիշատակելով Գուրիհանը, միաժամանակ տարրորոշում է Կենավուզն ու Մեղրին:

ա) «...զմաց նա (Դավիթ-բեկը-Ա.Ա.) ի Ղարաչիմեն եւ բանակեցաւ անդ, եւ անտի հրեշտակս արծակեաց ի Չաւնդուր, ի Մեղրի եւ ի Կենաուզ» (ՊՏԱ, էջ 133).

բ) «Եւ այր եկն առ նա եւ ասէ. Ահա Թուրքն... քսան եւ ութն հազարաւ դիւնեալ գան կամ ի Մեղրի եւ կամ ի Կենաուզն» (ՊՏԱ, էջ 134):

Եթե նկատենք, որ Գուրիհան տեղանունը գործածողը Ստեփանոս Շահումյանն է, որը հենց այդ գավառի (Կալեր կամ Եկդաստանց գյուղերի)²¹ ծնունդ էր, ապա պետք է ենթադրել, որ Գուրիհանի կիրառությունն ավելի նեղ էր ու տեղային, մինչդեռ Կենավուզինը՝ «համադափանյան» բնույթ ուներ: Իսկ Մեղրիի և Կենավուզի առանձին-առանձին հիշատակումը գալիս է հուշելու, որ այդ տարիներին Մեղրի «քաղաքն», արդեն իր բնակչությամբ և զինված ուժերով, բավականին մեծ կշիռ էր ձեռք բերել (տե՛ս նաև Ջորաջուցակ, էջ 143): 1767 թ. այցելելով Մեղրի՝ Հովսեփ Էմինը ծանուցում էր, որ քաղաքում բնակվում էր 3,000 ընտանիք և, շնորհիվ իր «առանց բացառության քաջարի տղամարդկանց», բազմիցս էր հաղթանակներ տոնել «հակառակորդների տարբեր զորաբանակների նկատմամբ»²²:

Քիւ-«Իքաց»

«Ղափանցվոց պատմության» Համապատում բնագիրը նշում է երկու հարևան

¹⁹ Տե՛ս կից հրապարակվող «Իններորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Սիւնիք ասի» Հավելվածը:

²⁰ Նույն տեղում:

²¹ Տե՛ս Ա. Մ. Այվազյան, «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները», էջ 78, ծնթ. 12:

²² *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, written in English by himself.* 2nd ed. (first published in London in 1792), (Calcutta: Baptist Mission Press, 1918), pp. 373-374.

«թուրքաբնակ» ավան. «Արդ իբրեւ լուր լինէր բանս այս ի Քիս եւ ի իքաց, գային ժողովէին ի միասին ամենայն արք բնակչացն Իքացու...» (էջ 155): ՊՍՇ-ի տվյալները, սակայն, թույլ են տալիս պնդել, որ «Իքաց» անունով առանձին բնակավայր առիասարակ չի եղել: Պարզաբանենք. Ս. Շահումյանը, շարադրելով Թորոս բեկի բախումը քիսեցիների հետ, հիշատակում է միայն մեկ «քաղաքի»՝ Քիսի ավերումը, և այդ մանրամասն նկարագրության մեջ ակնարկ իսկ չկա հարևան «Իքաց» ավանի և նրա բնակիչների գոյության մասին (տե՛ս ՊՍՇ, էջ 122-123): Թվում է, թե թյուրիմացությունն առաջացել է այնտեղից, որ «Պատմության» մեջ, դասական գրաբարի կանոնների համաձայն, ցեղանունները, բնակավայրերի անուններով բնակչության անվանումները և դրանցից կազմված հատկացուցիչները գրված են մեծատառով, ինչպես, օրինակ՝ «Հայքն Չաունդուրեան ապստամբեալ են ի Թուրքաց», «գորքն Հայոց», «քաջ եւ արի սպառազէնքն Մեղրացւոց» և այլն: Ահավասիկ, ՊՍՇ-ում այդպես է նշված նաև «Իքացը»՝ «քիսեցիներ» իմաստով. «Լեվազ Սափի Ղուլին... եկն նենգութեամբ ի յԱփկու վանքն, եւ գրեաց Իքաց իշխանացն...» (էջ 122): Նախնական պատումներում «Իքաց» բառի գործածման այս միակ դեպքն էլ, հավանաբար, շփոթության է մատնել Ղ. Սեբաստացուն Համապատումը խմբագրելու ժամանակ: Թերևս Սեբաստացին զգացել է նաև «Իքաց» բառի իրական՝ «քիսեցիներ» հավաքական իմաստը, այլապես դժվար է հասկանալ, թե Համապատումում նա ինչո՞ւ է հնարավոր համարել և՛ Քիսի, և՛ ենթադրյալ «Իքացի» բնակիչներին կոչել մեկ ընդհանուր ձևով՝ «ամենայն արք բնակչացն Իքացու» (էջ 155): Ղ. Սեբաստացու պատրաստած քարտեզում «Իգաց» և «Քիս» ավանների տեղադրությունը խուստուփ լեռան լանջերին պետք է համարել, - կրկնակի սխալ. ա) «Իքաց» (քարտեզում՝ «Իգաց») բնակավայր երբևէ գոյություն չի ունեցել (այս Իքացը չի կարելի շփոթել Ստեփաննոս Օրբելյանի հիշատակած Ծղուկ գավառի «Աքածիի» հետ). և բ) Քիսը չէր կարող լինել խուստուփի լանջերին, քանզի Ս. Շահումյանի պատմածից միանշանակ մակաբերվում է, որ այն գտնվում էր Մանլի մոտակայքում.

«...իբրեւ լուր եղել բանս այս (Թորոս-բեկի Ափկիսի մոտ տարած հաղթանակի մասին՝ Ա. Ա.) ի Քիս, ժողովեցան ամենայն արք տեղւոյն այնորիկ ի միասին եւ եկին արտաքս. եւ էջ առ նոսա Թորոսն ի գլխոյ Մանլեւին, եւ հարեալ ի դիմի՝ կոտորեաց ի նոցանէ զբազումս, եւ այլքն փախեան ի Քիս» (ՊՍՇ, էջ 123. հմմտ. Համապատում, էջ 155-156)²³:

Նույն պատճառով էլ Քիսը չի կարելի նույնացնել Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցանկում հիշվող Գեղվաձոր գավառին Կից²⁴ (այժմ՝ Քիրս) գյուղի հետ: Ըստ երևույթին, Ղ. Սեբաստացին, տեղադրելով Քիսն ու «Իգացը» խուստուփի լանջերին, նկատի ուներ Ս. Շահումյանի այն հաղորդումը, որ հայերից պարտություն կրելուց

²³ Հավանաբար, «Պատմության» այս հատվածի հիման վրա էլ Ղ. Ալիշանը նույնպես հետևեցնում էր, որ Քիսը և «Իգացը»՝ «մերձաւորք եւ յարեւելեան եզերս Մեղրաձորոյ թուին» (Սիսական, էջ 306):

²⁴ Տե՛ս «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի», էջ 41. հմմտ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №. 6271, էջ 338ա:

հետո Քիսի բնակիչները «զամենայն զկին եւ զորդիս իւրեանց հաւաքեալ էին ի վերայ բարձրագոյն ինչ գագաթան մերձ ի շէնն» (ՊՄՇ, էջ 123. հմմտ. Համապատում, էջ 155): Սրանից, սակայն, փորձենք անել այլ հետևություն. Նյութադի և Շվանիձոր գյուղերի միջև Քյասիլի անունով մի արտահայտիչ կոնաձև լեռնագագաթ կա (1313 մ): Միանգամայն հնարավոր է, որ հենց այս լեռան լանջերին, որոնցով հոսում է Շավգիր գետը, եղած լինի Քիս կամ Քաց բնակավայրը և լեռան անունից էլ առաջացած լինի նրա անվանումը կամ հակառակը:

* * *

Համապատում բնագիրը խմբագրելիս, Ղուկաս Սեբաստացին տեղագրական բնույթի կրճատումներ է արել Ս. Շահումյանի պատումի հետևյալ նկարագրումից. իմանալով Օրդուբադի կողմից «թուրքերի» նոր հարձակման (1724 թ.) մասին՝ Դավիթ բեկը Ծավից դուրս է գալիս պատերազմի՝

«Ել չորս հազարաւ ի վերայ այլազգեացն, եւ եգիտ զնոսա ի Լիչքին որ է յայնկոյս Ղոզղօզ գետոյն: Իսկ թուրքն բնակեալ էր ի Լչկին. իբրեւ տեսին զսոսա՝ ելին արտաքս եւ եկին ի Գողթ, որ է գետափն...»²⁵ եւ ոչ ետուն անցանել զգետն. եւ սոքա աստի եւ նոքա անտի մարտ եղեալ կռուէին յառաւօտէ մինչեւ ի 24 ժամ աւուրն, մինչեւ ի գալն նոցա ի Ջիպանդ ի գլուխն դաշտուն: Եւ ի գիշերի Տաւուք Պէկն էանց ի Հալի ձոր» (ՊՄՇ, էջ 126-127. հմմտ. Համապատում, էջ 160):

Համապատումն առհասարակ չի հիշատակում Գողթ և Ջիպանդ տեղանունները, մինչդեռ դրանց ճիշտ տեղադրումը թույլ կտա կազմել հիշյալ մարտի ամբողջական պատկերը: Դատելով վերոգրյալ հատվածից՝ Գողթը պետք է փնտրել այսօրվա Լիճք (=Լճկին) գյուղի մոտակայքում՝ Մեղրի գետի ափին (այս Գողթը չի նույնանում Գողթան կամ Գողթանսար լեռնագագաթի հետ, որը Լիճքից հարաբերականորեն մեծ հեռավորության վրա է): Իսկ Ջիպանդը, անշուշտ, գտնվում է Դաշտուն (Տաշտուն) գյուղի շրջակայքում. հավանաբար, ՊՄՇ-ն գրի առնողը, սխալմամբ, Դաշտուն անվանումն ընկալել է որպես «դաշտ» (հարթավայր) բառի բարբառային հոլովում և, ըստ այդմ էլ, այն սխալմամբ փոքրատառով նշել: Հայ պատմագիտության մեջ Մեղրի գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտը երկու հակադիր գնահատականի է արժանացել: Լեոն գրում է, որ «Դավիթ բեկի կրած պարտությունն այնքան ծանր էր, որ նա ստիպված եղավ վերադառնալ Հալիձոր»²⁶: Այս կարծիքը կրկնում է Հ. Ա. Կնյազյանը²⁷: Այլ է Ա. Գ. Հովհաննիսյանի տեսակետը. «Մի օր տևող ճակատամարտից հետո, անհրաժեշտ չհամարելով շարունակել մարտը, Դավիթ բեկը վերադառնում է Հալիձոր: Ըստ երևույթին, ճակատամարտի ընթացքում թշնամուն պատճառած կորուստները նկատի ունենալով, նա գտնում էր, որ հակառակորդը ի վիճակի չի լինի նորից

²⁵ Ս. Արամյանը նշում է, որ այստեղ «ծեռագրին մեջ՝ մեկ բառի տեղ պարապ թողված է» (տե՛ս ՊՄՇ, էջ 127, ճնթ. 22):

²⁶ Լեո. Երկերի ժողովածու (տասը հատորով), Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 193:

²⁷ Հ. Ա. Կնյազյան. Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ, Երևան, 1963, էջ 106:

հարձակման անցնելու»²⁸: Պետք է ասել, սակայն, որ Ս. Շահումյանի հաղորդումն առ այն, թե երկու կողմերը «կռվեին յառաւօտէ մինչեւ ի 24 ժամ աւուրն, մինչեւ ի գալն նոցա ի Ջիպանդ ի գլուխն Դաշտուն», որից հետո է Դավիթ բեկը գիշերով նահանջում Զալիժոր, թույլ է տալիս չհամաձայնել վերոբերյալ երկու տեսակետի հետ էլ: Արդ, Դաշտուն (Տաշտուն) գյուղի մոտ է գտնվում համանուն լեռնանցքը, որով ցայսօր անցնում է Մեղրին Ղափանի հետ կապող միակ բարեկարգ ճանապարհը²⁹: Ջիպանդ անունն իսկ (պարսկերեն «պենտ», այսինքն՝ կապ, կապանք)³⁰ հուշում է, որ խոսքը լեռնանցքի վրա հսկող ինչ-որ բնական դիրքի կամ պաշտպանական կառույցի մասին է, ինչպես, օրինակ՝ Դարբանդ, Ուզունպատ, Ուզուն պենտ: «Այլազգիներին» հաջողվում է հասնել, գուցե նաև գրավել այդ ռազմական տեսակետից կարևոր բարձրությունը («Ջիպանդ ի գլուխն Դաշտուն»): Այժմ նրանք արդեն սպառնում էին իսպառ փակել Դաշտունի լեռնանցքը և կտրել կապը Փոքր Սյունիքի (բուն Ղափանի կամ «Չալիժորի երկրի») ու Կենավուզ-Գուրիհամի միջև: Այդպիսով, Ղափանի իշխանապետության սիրտը հանդիսացող «Չալիժորի երկրի» համար լուրջ վտանգ էր առաջանալու անպաշտպան գտնվել Բարգուշատի Ֆաթի-Ալի սուլթանի հնարավոր հարձակման առջև, մանավանդ, եթե նկատի առնենք, որ Դավիթ-բեկը նորերս էր ավերել Շահայպակլու գյուղերը և պատասխան արշավն, այն էլ այդպիսի հարմար պարագաներում՝ միանգամայն սպասելի էր: Նման կացություն Դավիթ բեկը հանդուրժել չէր կարող. ամբողջ շարժման բախտը փորձության չենթարկելով՝ նույն գիշերը նա նահանջում է Զալիժոր: Այս վարքագիծը սխալ կլինի որակել որպես Սյունիքի հարավային շրջանների հայությանը «թուրքերի» քմահաճույքին հանձնելու քայլ. ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, Մեղրին և Չավնդուրը բավական ուժեր ունեին թշնամուն դիմագրավելու և նույնիսկ ջախջախիչ պարտության մատնելու համար (տե՛ս ՊՍՇ, էջ 127-129. հմմտ. ՊՏԱ, էջ 134. Համապատում, էջ 160-162):

Հանրագումարի բերելով վերն ասվածը՝ կարող ենք ամփոփել.

ա) Դավիթ բեկի իշխանապետության զբաղեցրած տարածքը հիմնականում հանձնվում է այսօրվա Հայաստանի Հանրապետության Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի հարավային շրջանների հետ.

բ) Այժմյան Մեղրու շրջանի տարածքը 1720-ական թթ. ուներ երկու անվանում՝ Կենավուզ և Գուրիհամ, որոնցից առաջինն իր իմաստով ընդգրկում էր ամբողջ շրջանը և ուներ համադափանյան գործածում, իսկ երկրորդը՝ տեղային նշանակության էր և հոմանիշն էր Մեղրի գետի հովտով ձգվող ու դեռևս XVII դարում Կաքավաբերդ անունով ծանոթ գավառի.

գ) «Ղափանցվոց պատմության» Համապատում բնագրում հիշվող Իքաց (Իգաց) բնակավայր առհասարակ գոյություն չի ունեցել.

դ) Համապատումից դուրս մնացած, բայց ՊՍՇ-ում առկա «Ջիպանդ» ու «Գողթ» տեղանունների օգնությամբ պարզաբանվում է 1724 թ. տեղի ունեցած ռազմական գործողությունների մի կարևոր շղթայի զարգացումը:

²⁸ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 169:

²⁹ Տե՛ս *Հայկական Սովետական Հանրագիտարան*, հ. 11, Երևան, 1985, էջ 571-572: Տաշտունի լեռնանցքը կոչվել է նաև Դիբազլուի լեռնանցք (տե՛ս Ս. Լիսիցյան, Ձանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 92):

³⁰ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 437:

Այս ամենը վկայում են, որ «Պատմության» վեներտիկյան հրատարակությունն, իր նախնական և Համապատում բնագրերի տարբերություններով հանդերձ, կարիք ունի հետագա տեղագրագիտական հետազոտությունների, որոնց վերջնական նպատակը պիտի լինի XVIII դարի 20-ական թթ. Սյունյաց ազատագրական պատերազմի առավել ընդգրկուն և ամբողջական քարտեզի ստեղծումը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ց

Ղուկաս Սեբաստացի, Համառօտ պատմութիւն թագաւորացն Հայոց եւ աշխարհագրութիւն Հայաստանի եւ աշխարհագրական բառարան,
Վեներտիկ,
Ս. Ղազարի մատենադարան, էջ 63-70՝

Ի ն ն եր ո ղ ո ղ աշխարհն Մեծին Հայոց, որ Սիւնիք ասի

Սիւնեաց աշխարհն, որ ըստ միոյ մասին այժմ կոչի Խափան, յարեւելից կուսէ կայ Արարտեան աշխարհին. ի հարաւոյ ունի զգետն Երասխ եւ զաշխարհն Վասպուրական. նոյնպէս եւ ի յարեւելից զգետն Երասխ. ի հիւսիսոյ արեւելից զԱրցախ, եւ ի հիւսիսոյ զաշխարհն Գուգար: Արդ, կոչի սա Սիւնիս, զի է տունն Սիսակայ. եւ բնակիչք սորա որդիք Սիսակայ: Այս Սիսակ էր որդի Գեղամայ եւ թոռնեայ նախնւոյն Հայկայ: Այր անձնեայ եւ գեղուղէշ, ազնուաբարոյ եւ քաղցր, որ վասն առաւել քաղցրաբարոյութեան աղու ձայնէին զնա. եւ երկիր ժառանգութեան նորա աղուանք: Իսկ երկիր ժառանգութեան Սիսակայ եւ որդւոց նորա եղեւ ի գետոյն Երասխայ մինչեւ ցծովն Գեղամայ, եւ մինչեւ ցամուրն Հունարակերտ եւ մեծագոյն դաշտն, որ կոչի դաշտ Աղուանից, զոր Կուր գետն հատանէ, եւ լեռնակողմն դաշտին մինչեւ ցծովն Կասպից որպէս եւ Խորենացի (Բ. Պատմութիւն. 7. եւ յայլուր) եւ այլք եւս: Բայց յետ բազում ժամանակաց իբրեւ զօրացան ազգն ալանաց, եւ կալան զբազում գաւառս տանն Սիսակայ եւ նոքա կոչեցան աղուանք, որոց կաթուղիկոս եղեւ նախ Գրիգորիս՝ թոռն սրբոյ Լուսաւորչին: Արդ, գունտն Սիսակայ եւ ամենայն տուն նորա ի հնունն էր իբր թագաւորութիւն ինչ Հայոց, եւ ունէր զբազում աշխարհս եւ զնահանգս, որոց նախապետական կամ նախկին աշխարհն էր աշխարհս այս Սիւնեաց, որ ունի զերկոտասան գաւառս, որք են այսոքիկ.

Նախ զգաւառն Երնջակ, որ ունի զհամանուն իւր բերդ:

Երկրորդ՝ զգաւառն Ջահուկ, որ է սահմանակից Նախիջեւանայ:

Երրորդ զգաւառն Վայոց ձոր, որ եւ Եղեգից ձոր ասի, ուր է Հերմոն ցի/կ/°:

Չորրորդ զգաւառն Գեղարքունի կամ Գեղագունի, այսինքն ստացուածն կամ տունն Գեղամայ, որ է առ ծովուն Գեղամայ, որ այժմ ասի ծով Սեւանու: Զի Գեղամ հայրն Սիսակայ թողեալ զՀարմայ որդին իւր ի յԱրմավիր երթայ յարեւելս հիւսիսոյ եւ յեզր

ծովակլին առնել շինուածս եւ կոչէ զայն Գեղագունի եւ ծնանի անդ զՍիսակ անձնեայ եւ սմա սահման հատանէ ժառանգութեան ի ծովուն ընդ արեւելս եւ կոչէ զաշխարհն զայն Սիսակ: Գաւառս այս Գեղագունեաց ունի զծովն Գեղամայ, որ եւ Սոտք, եւ այժմ Սեւան ասի եւ զՍեւան կղզին ի մէջ ծովուն եւ ուր է մեծ վանքն ճգնաւորաց: Ունի եւ զմեծափառ վանքն եւ զՄաքենիս. ունի եւ զբերդն Գեղամէ, զոր Գեղամ շ[ի]նեաց ի ձորակի միոջ առ ստորոտով լերին: Բայց յետոյ թռնն նորա Գառնի կոչեաց՝ յիւր անուն Գառնի: Ունի եւ զակն Զուրաստան գետոյ:

Յինգերրորդ զգաւառն Աղահէճք:

Վեցերրորդ զգաւառն Ծղունք:

Եօթներրորդ զգաւառն Աբանդ, որ երեւի թէ պարտի գրիլ Զաբանդ՝ զի մերձ սորին եղեալ գաւառն, որ է ի յԱրծախ աշխարհին, գրի միւս Զաբանդ: Գաւառս այս այժմ կոչի Խաբան. թէպէտ Խաբանն ընդարձակապէս առնանի այժմ եւ ունի յինքեան զայլ գաւառս Սիւնեաց: Կոչի եւս այժմ գաւառս այս Զաբանդ՝ գաւառ եօթնաբերդեան, եւ ունի զփոքր Սիւնիս, եւ զԳուրիս գաւառս, ունի եւ զբազում աւանս եւ զբերդս որպէս ի վայր ասասցուք:

Ութերրորդ զգաւառն Բաղքծորք³¹:

Իններրորդ զգաւառն Արեւիք:

Տասներրորդ զգաւառն Սիսական, որ այժմ Սիսան ասի, եւ է լայն եւ ընդարձակ յոյժ, եւ բաժանի յերկուս, որոյ մի մասն է ի կողմն Սիւնեաց եւ միւսն ի կողմն Արցախու: Եւ է ի հիւսիսոյ Զաբանդ գաւառին (թէպէտ բոլոր աշխարհն Սիւնեաց, Արցախու, Ուտացուց եւ այլն՝ կոչին Սիսակեան): Եւ ունի մասնաւոր գաւառս այս Սիսակեան (որ է ի Սիւնիս) գլխուն աւանս, որոց ոմանք են սոքին, այսինքն՝ Որոտն՝ որ ունի զմեծ բերդ, Տաթեւ՝ որ ունի զբերդ, Տեղ, Կորէս, Կորի, Խնածախ՝ որ ունի զմեծ բերդ, Շնհեր՝ որ ունի զբերդ, ունի եւ զմեծ բերդն Խնծորէսք, ուր Մխիթարն սպանաւ ի մերում ժամանակի, որ իշխէր երկրին Խաբանու յետ մահուան Դաւիթ Պէկին եւ զայլ բերդս: Ունի եւս աշխարհն Սիւնեաց զայլ երկու գաւառս, որոց մինն երեւի գոլ գաւառն այն, որ այժմ կոչի Չավնդուր, որ յարեւելից հարաւոյ ունի զմեծ գետն Երասխ, յարեւմտից զլերինս Խաչաօլու, որովք բաժանի ի Զաբանդ գաւառէն. ի հիւսիսոյ ունի զգետն Ուրոտնայ, որով բաժանի ի Պարկուշատ գաւառէն: Եւ ունի Չավնդուր այժմ զայսոսիկ փոքր աւանս, այսինքն՝ զԿապագլուխ, զԽոջան, զՊուրջովան, զՊարտախ, զՇիւանածորն, որ ունի զբերդ, զԹուփ, զԿումարայց, զՇահապակլու, զՓքնի, զԻշկետ, զԿեմանցու, զՇխեր, որ է իշխանանիստն Չավնդուր, եւ զբազում գիւղորայս:

Իսկ միւսն երեւի գոլ գաւառն Գուրիս կամ Կենաուզն, որ ունի զաւանն Մեղրի ի վերայ գետոյն Մեղրեայ: Եւ այս աւանս յերիս մասունս /եւ կամ ասասցուք/ յերիս մեծամեծ թաղս բաժանի ոչ հեռի ի միմեանց՝ երկուքն յայսկոյս գետոյն եւ մինն յայնկոյս, որ կոչի Փոքր թաղ: Ունի եւ զամուր: Այս աւան պաշարեալ եղեւ նախ ի մահմետականացն ուրուտասան հազարաւ ի բնակչացն Ուրդովարայ, նախքան զգալն օսմանցուց ի Խաբան (ի մերում ժամանակի) եւ ի յաւուրն վեցերրորդի յետ պաշարման իւրոյ օգնութիւն գտեալ ի զօրականացն Դաւթի, հարին կոտորեցին աւելի քան զտասն հազար այր ի մահմետականացն եւ զայլսն ի փախուստ արկին ի յՈւրդովար:

³¹ Բաղքծորք=Բաղք և Չորք:

Եւ յետոյ զբազում այլ մարտս պատերեզմաց արարին բնակիչք սորա ընդդէմ օսմանցւոցն. մի անգամ եւս գերի վարեցան ի նոցանէ: Ունի եւս Կենաուզ զաւանն Կրճիվան, որ է ի յելս կրճին, որ այժմ կոչի Ուզունպէնտ: Եւ է կիրճս այս առ Երասխաւ, եւ երկայն ձգի մինչեւ ցկողմանս Ուրդովարայ գնացս իբր միոյ ժամու կամ երկուց, որոյ մի կողմն է Երասխն մեծ, եւ ի միւսն քարաժայռքն Ալանկեզայ: Եւ աստի միայն ի կողմանցն Գողթնայ մտեալ լինի ի Խաբան: Ունի եւ Կենաուզն զհամանուն իւր աւան, եւ զաւանն, որ կոչի Լեւազու ձոր, զաւանն Լճկին, եւ զայլս, եւ զբազում գիւղս:

Իսկ Գուրիամ ունի զաւանն Կալեր, ուր բնակէր Պապ զօրագլուխն Դաւթի 700 զօրօք ի մերում ժամանակի, եւ զայլ աւանս, որք կոչին Մազրան, Քար, Դաշտուն, Ջուար, Թաղամեր եւ այլն:

Դարձեալ զաւանն Խաբան, որ եւ Զաբանդ ասի, թէպէտ այժմ ընդարձակապէս առեալ ունի եւ զԳուրիամ, զՉավնդուր եւ զայլ գաառս ի Սիւնեաց աշխարհին, սակայն, յատկապէս ունի զՓոքր Սիւնիս եւ զՅալիձոր, ուր բնակէր Դաւիթ Պէկն ի մտանելն նորա ի Խաբան: Այս Դաւիթ Պէկն էր իշխանագուն եւ արիասիրտ, ազգաւ հայ ինքն եւ ամենայն հետեւօղջ իւր, եւ առաքեցաւ ի յիշխանաց իշխանէն վրաց ի պահպանութիւն երկրին

Խաբանու՝ ըստ խնդրոյ Զայոց բնակչացն: Եւ թէ որպէս եմուտ ի Խաբան, եւ թէ ի գալ նորա որպէս ժողովեցան առ նա բնակիչքն Խաբանու, եւ զորքան մարտս պատերազմաց ետուն ընդդէմ պարսից եւ օսմանցւոց, եւ զորքան յաղթութիւնս արարին՝ տեսցես ի համառօտ պատմութեան, զոր գրեցաք: Զալիձոր է անուն աւանի, ուր բնակէր մէկք Փարսադան յաւուրս Դաւիթ Պէկին երկերիւր յիսուն զօրօք: Նաեւ անուն փոքրիկ զաւառի, ուր բնակէր եւ Տեր Աւետիսն չորեք հարիւր վաթսուն եւ ութն արամբ: Եւ աստէն մերձ ի Զալիձորոյ գետոյն շինեաց Դաւիթ զանառիկ բերդն, որ կոչի բերդ Դաւթի: Չայս բերդ եկին պաշարեցին եօթանասուն հազարաւ զօրքն օսմանցւոց, եւ ելին արտաքս զօրականքն Դաւթի, եւ զբազումս ի նոցանէ տապաստ արկին անդ, եւ մնացեալսն ի փախուստ արկին: Բայց յետ մահւանն Դաւթի, նենգեալ զօրքն օսմանցւոց մտին ի ներքոյ երդմամբ չառնելոյ զվնաս ինչ: Եւ իբրեւ մտին ստեալ ուխտին՝ հարին կոտորեցին զամենայն բնակիչսն եւ ի գերի վարեցին զկանայս, եւ զմանկունս, եւ զկուսանս, զի էր անդ եւ մենարան կուսանաց, եւ զպարիսպն կո[ր]ծանեցին: Ունի եւ զանապատն հարց ճգնաւորաց:

Խաբան ունի եւ զբազում աւանս, որք այժմ կոչին Մանլեւ, Ուլթունաց, Քիս, Իքիս Ղզըղուշչին, Իգաց, Վահրիվար, Ողջանց, Քիրտեկաց, Կեց, Աջպէջ, Մահուտլու, Եղեզն, Խոտանան, Մաջ, Դանձաւեր, Գետաթաղ, Շահանդուխդ՝ որ ունի զբերդ, Շնաթաղ, Դարպաս՝ որ ունի ի հիւսիսոյ կողմանէ զմեծ լեռն, որով բաժանի ի Սիսան զաւանէն, որ եւ Սիսակ ասի: Եւ բնակիչքն Դարպասայ են մեծամեծ վաճառականք, եւ փարթամք: Եւ զայս ունի եւ զքաղաքն իշխանանիստ, որ այժմ կոչի Ղաղալայ Եսքիշէհիր, զորմէ ասի թէ հնումն էր մեծ քաղաք: Եւ զՂողուրդ, ուր այժմ նստի իշխանն Խաբանու: Ունի եւ զմեծ բերդն Ջելու ի վերայ լերինն Բուխուրութայ, զոր Դաւիթ Պէկն էառ եւ կոտորեաց ի յամրոցի անդ չորս հազար սպառազէնս մահմետականաց: Եւ զայլ բերդս եւ զբազում գիւղորէս ունի Խաբան: Եւ ի յաւուրս Դաւիթ Պէկին ի Շնհեր (որ ունի

զմեծ բերդ) բնակեին Պուան, Մինաս, Ստեփաննոս, եւ ընդ նոսա 550 զօր: Ի Տաթեւ՝ Ղիջին, Եսային, Տիրացուն, Սիմէոնն, Աբկարն, եւ ընդ նոսա 400 զօր, իսկ ի Չավնդուր գաւառին Թորոսն եւ ընդ նմա 2000 զօր: Ի Մեղրի Կոստանդին, Սարին, Առաքելն, եւ ընդ նոսա 400 զօր: Ի Պաղաբերդն՝ Ատոն, հարիւր յիսուն արամբ: Ի Կուլաբերդն Ղազար եւ ընդ նմա 110: Ի Շիվանուծորն Սարգիս զօրապետն 250 արամբ: Սոսա եւ յայլ ամուրս եւ յաւանս բնակեին զօրքն հայոց յաւուրս Դաւթի՝ ամենեքեան սպառազէնք եւ պատրաստեալք ի պատերազմ:

Ունի եւս Խաբան զլերինս Ալանկեզայ ի հարաւոյ, որովք բաժանի ի Գողթան գաւառէն: Եւ ի յարեւմտից՝ զլերինս Ղազանկուլու ասացեալ եւ զլեռն Բուխուրութայ, որ ի Ձեւու մինչեւ ցկողմանս Մանլեւոյ ձգի, զլեռն Կասպէլու եւ զայլս: Ունի եւ զգետն Ղոզղոզ, որ եւ գետ Մեղրու ասի, որ ելեալ ի յԱլանկեզայ լեռանցն մերձ ի Դաշտուն աւանն երթայ յարեւելս կոյս եւ անկանի ի յերասխ: Եւ զգետն Չավնդոյ, որ ելեալ ի Խուստուփայ լեռանցն երթայ յարեւելս կոյս ի Չավնդուր եւ խառնի յերասխ: Եւ զգետն Յալի ծորոյ, որոյ մի մասն ելանէ ի լեռանցն Ղազանկուլոյ եւ միւսն ի լեռանցն Կասպէլոյ եւ միացեալք յարեւելից կուտ Ձեւու բերդին երթայ ի Յալիծոր, ընդունելով յինքն զայլ եւս գետս՝ անտի երթայ խառնի ի գետն Որոտնայ: Իսկ գետն Որոտնայ, ընդունեալ յինքն զայլ եւս գետորայս ելեալս ի կողմանցն Դարպասայ, երթայ յարեւելս հարաւոյ անցեալ ընդ սահմանս Չավնդոյ եւ Պարկուշատայ, խառնի յերասխ:

Դարձյալ աշխարհն Սիւնեաց ունի եւ զայսոսիկ քաղաքս, որք այժմ կոչին Կորիս (որ է Գառնի), Կարակոս, Ապարան (որ երեւի Դարպասն) եւ այլն: Եւ ի յարեւելից հարաւոյ ունի եւ զգետն Երասխ ի քարավազն, ուր գետն զքարածայռս հոսէ: Ունի եւ զբերդն Յունարակերտ ի սահմանս Շարայի: Ունի եւ զգերեզմանն սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին ի յԱմարեան (իմա՝ Ամարասուն - Ա. Ա.) աւանին ի Փոքր Սիւնիս:

Լինի ի Սիւնիս գերերի եւ նուռն, եւ մուրտ, եւ ամուր տեղիք: Բնակիչքն սիւնեաց են արք զօրաւորք եւ քաջապատերազմողք՝ որպէս եւ ամենայն տունն Սիսակայ ի սկզբանէ մինչեւ ցայսօր, զի նաեւ ի մերում ժամանակի պարապորթ գտեալք զօրք կազմեցին. ընդդէմ ելին սակաւութ ընդդէմ մեծամեծ թագաւորաց եւ բռնաւորաց բազում պատերազմաւ եւ ապրեցան, մանաւանդ, բնակիչքն Խաբանոյ:

Բայց յաւուրս Սմբատայ արքայի Բագրատունւոյ, որ եւ կրեաց զմեծ նահատակութիւն, եմուտ թուրքն Ատրպատականաց ի Սիւնիս եւ նստաւ անդ քանի ինչ ամիսս, եւ զորս եւ գտանէր՝ չարաչար տանջանօք սպանանէր, որպէս եւ յառաջ, քան զայս, հաքարացիքն կոտորեցին զամենայն այր ի Տարոնոյ գաւառին, որ կարող իցէ բառնալ զսուր: